

18723

18724

891.99

n-35

2003

891.993

W = 5360 295

Բ-38 ՐԱՓՓԻ

ՈՎ ԷՐ ՄԵՂԱԻՈՐ

հասկես

(ՆՈՒԷՐ ԳԵՐՄԱՆԵԱՏԻ ՀԱՅ ՈՒՍԵՆՈՂՆԵՐԻՆ)

Երկնքի վերայ սահում են աստղեր,
Եւ րուպէական նոցա վառ շողեր
Մի բանի վայրկեան փայլում են պայծառ,
Յանկարծ կորչում են.—տիրում է խաւար...

1001
4925



ՏԳԱՐԱՆ Ա. Յ. ՄԵԼԻԿ-ՉԱՀՆԱԶԱՐԵԱՆՅԻ

1895

2003

4397

Доз. пенз. Тифлисъ 20-го Марта 1895 года.

Ա.

Յուզիս ամիսն էր:

Թ.. քաղաքումը, յետ կէս աւուր սաստիկ տօթին, աւելի մարդիկ չէին երևում: Հարուստները պառկած էին իրանց բախտաւոր ապարանքներում: Խանութպանները, գինեւէտ ճաշից յետոյ, քնել էին կրպակների խորքումը: Անվաստակելի կի ն տ օ ն միայն, մրգեղէնի թաբախը գլխին՝ ընդհատում էր փողոցների խուլ-մելամաղձական լուսթիւնը, կոչելով «չերեշնի, — վիշնիքի — հայ»:

Այգպիսի դատարկացած փողոցների

մինի միջով շտապով սահում էր ճանապարհորդական մի կառք: Նա կանգնեցաւ բաւական մեծաշէն տան հանդէպ: Կառքից դուրս թռաւ մի բարձրահասակ երիտասարդ, սեւացած ճանապարհի փոշոց, և անհամբերութեամբ սկսաւ քարշել դրան զանգակը: Դուները բացուեցան: Երիտասարդը ներս մտաւ: Սանդուխների վերայ փաթաթուեցաւ նորա վզին մի լղարիկ և ցամաքած կին. «Ա՛խ, Միշա» կոչելով՝ ուրախութիւնից նա թուլացաւ երիտասարդի գրկի մէջ:

Որդու կարօտութիւնով երկար տարիներ հալումաշ եղած այդ կինը, երիտասարդի մայրը, Մարիամն էր: Իսկ եկուորը էր նորա որդին՝ Միքայէլ Բաքոսեանը:

Բ.

Երիտասարդը, ձեռքը տուած փոքր ի շատէ սթափուած մօրը, մտաւ նորա հետ զահլիճը:

Այստեղ հաւաքուեցան նորա բոլոր արքը քոյրերը, փոքրիկ եղբայրը և տան սպասաւորները: Նոցա ուրախութեանը չափ չը կար: Սմենի հետ գրկախառնուելուց յետոյ, երիտասարդը բախտաւոր էր զգում իրան, որ գտնվում է հայրենական օջախի մէջ:

Բայց խեղճ մայրը չէր հեռանում որդուց: Նա կամ համբուրում էր նորան, կամ գրկում էր, կամ լաց էր լինում, կամ ծիծաղում էր, մի խօսքով, ուրախութիւնից հիացած՝ չը գիտէր, թէ ինչ էր անում:

—Ո՛րպէս մեծացել ես դու Միշա, սասց նա լի մայրական սիրով որդու վերայ նայելով:

—Դու այդ նկատում ես, հարցրեց որդին ժպտալով:

—Դու մի փափուկ պատանի էիր, երբ ես ճանապարհ դրի քեզ դէպի Գերմանիա, այժմ դարձար այդպէս մօրուքով:

—Այ՛ո՛, այգալէս փոխում են մարդուն տարիքը, մայր իմ:

—Տարի՛քը... կրկնեց Մարիամը հոգոց հանելով: Ամբողջ ութը տարի է, երբ քեզ չեմ տեսել... բայց գիտէս, Միշա, սրբան տանջուեցայ ես այդ ութը տարումը...:

Արտասուքը դարձեալ սկսաւ գլորուել Մարիամի ցամաքած երեսի վերայ:

—Այսուհետեւ իմ ներկայութիւնս կը մխիթարէ քեզ, մայր իմ, խօսեց որդին գրկելով նորան:

Երբ փոքր ի շատէ հանգստացան այն բոլոր ուրախ և տխուր զգացմունքները, որոնք յուզվում են կարօտեալների առաջին տեսակցութեան ըստէնքում, երիտասարդը սկսեց լուացուել և սրբել իւր վրայից ճանապարհի փոշին:

Գ.

Բայց տանեցոյ աղաղակը, նոցա ու-

րախութիւնը և ծիծաղը, զարթեցրեց մերձակայ սենեակում քնած Արտեմյ Պաւլիչին, երիտասարդի հօրը: Նա իսկոյն վազեց դէպի դահլիճը, երբ լսեց որդու գալուտը:

Ծերունի հօր ուրախութեան սահման չը կար: Երբ նա բաւականին սթափուած էր իւր հրճուանքից, երբ հանդարտել էին նորա մէջ հայրական սրտի կրքերը, հարցրեց.

—Աւարտեցի՞ր, Միշա:

—Աւարտեցի, հայր իմ:

—Շատ բան սովորեցար, Միշա:

—Սովորեցայ, որքան կարող էի...

Մի այսպիսի համեստ պատասխան չը լրացրեց հօր հետաքրքրութիւնը, և նա կրկնեց.

—Ամէն բան սովորեցար, Միշա:

Երիտասարդի դէմքի վերայ վազեց մի թեթև ծիծաղ:

—Մի՞թէ կարելի է ամեն բան սովորել, հայր իմ:

Վերջին խօսքերը փոքր ինչ զիպան
 Տօր ինքնասիրութեանը, որ կարծում
 էր, թէ որդին աշխարհում ոչինչ չէր
 թողել առանց ուսանելու: Բայց երիտա-
 սարդը փարատեց նորա այդ մտատանջու-
 թիւնը, յայտնելով, թէ նա դարձել էր
 դօկտօրի ուսումնական տիտղոսով:

— Էդ մինը լաւ ես արի, որդի, ա-
 սաց հայրը ուրախանալով, որ Պ օ խ տ ու Լ ր
 ես դարձել: Դրանից յետոյ էստեղի դօխ-
 տուրների մունաթէն էլի կու պրծնինք:
 Անիծուածները մինչև կարմիր տասը մա-
 նէթանոցը չեն առնում, հիւանդի մօտ
 չեն գալիս. էն էլ պէտք է քո Փայտօ-
 նով բերես...

Իսկ Արտէմ Պաւլիչը սխալուում էր
 իւր մխիթարութեան մէջ, որովհետեւ
 նրա որդին բժշկութիւն չէր սովորել, այլ
 նա էր դօկտօր իրաւաբանութեան, և
 ունէր գերմանական համալսարանի դիպ-
 ւում:

Երիտասարդ Բաքոսեանը մի տղա-
 մարդ էր բարձր հասակով, խիտ և սև մա-
 գերով, թուխ-դեղնագոյն դէմքով, կեն-
 դանի և վառվռուն աչքերով: Նորա բո-
 լոր շարժուածքը, նորա դէմքի աղդու-
 բացատրութիւնները՝ արտայայտում էին
 եռանդոտ բնաւորութիւնը մի համարձակ
 ուսանողի:

Հանգստանալով ճանապարհի յոգնա-
 ծութիւնից՝ Բաքոսեանը սկսաւ այցելու-
 թիւններ անել իւր զանազան ծանօթնե-
 րի և բարեկամների մօտ:

— Լաւ խելք ես արել, որ օրէնք-
 ներ ես սովորել, ասաց նորան մի սպի-
 տակահներ ծերուկ գեներալ: — Շուտով ծա-
 ռայութեան մէջ կը մտնես, ռոճիկ և չին
 կը ստանաս... կը տնօրինես քեզ մի լաւ
 ասպարէզ... այնուհետեւ պատրաստ կը
 լինի քեզ մի կնիկ խիստ չաղ օժի-
 տով...

—Տեսնենք... պատասխանեց երիտասարդը.—ես դեռ այդպիսի ցանկութիւններ չունեմ, աւելացրեց նա և մի քանի սովորական խօսակցութիւններից լետոյ կատարեց իւր առաջին վիզիտը:

—Շատ ապրես, որդի. խրատ էր կարգում նորան հարուստ վաճառական պարոն Փողատէրեանցը: Հայրդ ծերացել է, էլ էնքան բանի պէտք չէ. բացդուհասել ես, աշխատիր, նորան օգնել փողաթններում, առևտուրում և ամեն բանում...: Զակօնն էլ խօսմ լաւ գիտես, աղօսկատի փող էլ չէք տայ...: Ա՛խ, էդ աղօսկատները, դրուստ մարդու կաշի են մաշկում, կաշի...

«Ի՞նչ քարոզն էլ լսեցինք», ասաց իւր մտքում Բաքոսեանը, և փոքր ինչ խօսելով նորա և ընտանիքի առողջութեան մասին, հեռացաւ պարոն Փողատէրեանցից:

Նորան այն օր մնում էր մի վիզիտ տիկին Շնորհաբաշխի մօտ:

Սալօնական տիկինը, որ մի հեռաւոր ազգակցութիւն ևս ունէր Բաքոսեանների հետ՝ ընդունեց երիտասարդին խիստ ուրախութեամբ և ընտանեկան կերպով, թէև նայում էր նորա վերայ, որպէս առաջին փոքրիկ Միշայի վերայ:

Նոցա խօսակցութիւնը մեծ մասամբ եղաւ Գերմանիայի, Շվեյցարիայի և այնտեղի ուսանող կանանց և օրիորդների մասին: Վերջ ի վերջոյ, դեռ իւր նախկին գեղեցկութեան թառամած վարդերը պահպանած տիկինը յայտնեց, թէ նա նոյնպէս նպատակ ունի Յիւրիս գրնալ:

—Գնում էք ուսանելու, հարցրեց Բաքոսեանը ժպտալով:

—Չէ, Միշա, այստեղի կեանքը ինձ բոլորովին ձանձրացրեց, սարսափելի դատարկութիւն է տիրում մեր քաղաքում, դնում եմ մի փոքր հանգստանալ այնտեղ:

—Այն վատ չի լինի այստեղ յոգնել

և այնտեղ հանգստանալ... հեզնօրէն տիկնոջ խօսքը կտրեց Բաքոսեանը:

—Չէ, Միշա, այնպէս ուզում եմ Յիւրիիսում լինեմ...

—Ուզում էք... գնացէք...

—Դու միշտ ծիծաղում ես, Միշա, հաճոյամով կերպով երիտասարդի ձեռքը բռնելով, ասաց տիկինը:—Դու էլի էնպէս հանաքներ ես սիրում, որպէս քո պատանեկութեան ժամանակ:

—Չէ, Աննա Կիրիլովնա, ես այժմ շատ համեստ եմ:

—Ի՛նչ նշնելու տղայ ես, Միշա, ի՛նչ հինգ հազար թուրմանով աղջկերք պատրաստ են քեզ համար, ասաց տիկինը խօսքը փոխելով, և միևնոյն ժամանակ նորա ձեռքը չը թողնելով իւր ափի միջից:

—Ես պօրտմանների հետ պսակուելու նպատակ չունեմ...

—Չէ, չունես, քեզ էլ կը տեսնինք:

—Լաւ, ինչ նպատակ կայ այստեղի

աղջիկների հետ պսակուել:

—Ինչո՞ւ:

—Նորա համար որ, նոքա ոտքից մինչև գլուխ զուրկ են բուն քաղաքակրթութիւնից:

—Ո՛չ Միխայէլ, այստեղ կան և լաւ աղջիկներ:

—Այսինքն նրանք, որ հայերէն խօսելն անգամ չը գիտեն:

—Այդ մի մեծ պակասութիւն չէ. բաւական է, որ նոքա ուսում ունեն:

—Հաւատացէք, Աննա Կիրիլովնա, այդ ուսեալները գեղեցիկ խնձորների են նմանում, զրսից սիրուն գոյնով, անուշ հոտով, բայց ներսից աւերուած և փթած սրտով...

Մի քանի այդպիսի խօսակցութիւններից յետոյ, երիտասարդը հեռացաւ, թէև տիկինը շատ ստիպում էր, որ ճաշին իրանց մօտ մնայ:

Ե.

Նոյն աւուր երեկոյեան պահուն, Բաքոսեանին տեսութիւն էին եկել մի քանի բարձր ուսում ստացած, մայրաքաղաքի ուսանողներ,— իրաւաբան, բժշկի, բնագէտ և պատմաբան:

Բաքոսեանը համբոյրներով ընդունեց նոցա որպէս իւր հին ընկերներին: Մի քանի հասարակ զրոյցներից յետոյ խօսակցութիւնը նոցա մէջ ընդունեց աւելի նշանաւոր ձև:

Երբ նոքա սկսեցին խօսել նոյն քաղաքի ուսումնարանների, լրագրութեան և կրթեալ երիտասարդութեան գործունէութեան մասին՝

— Մեր երիտասարդութիւնը ոչինչ չէ շինում, պարոններ, ասաց նոցա բարեկամական անկեղծութեամբ Բաքոսեանը:

— Ի՞նչ կարող է շինել, պատասխանեց երիտասարդ պատմաբանը:— Երբ նո-

ցա գործունէութեան ընթացքն այնքան սահմանափակուած է:

— Ծուլերը միշտ իրանց արդարացնելու պատճառներ ունեն, պատասխանեց Բաքոսեանը ծիծաղելով:

— Քո ըթից, եղբայր, դեռ արտասահմանեան քամին չէ դուրս եկել. մի քանի օր անցնի՝ դու բոլորովին այլապէս կը խօսես, մէջ մտաւ գանգրահեր բնագէտը:

— Ասացէք, խնդրեմ, ինչ կարելի է այստեղ գործել, հարցրեց իրաւաբանը աւելի ծանր կերպով:

— Օրինակի համար, մենք դեռ ևս մի օրինաւոր լրագրութիւն չունենք, պատասխանեց Բաքոսեանը:

— Իիցուք թէ ունենայինք, բայց մեզանում լրագիր ո՞վ է կարգում, հարցրեց բժիշկը:

— Այդ իսկ պատճառով, որ մեզանում լրագիր չեն կարգում, նորա խօսքը կտրեց Բաքոսեանը. պէտք է հրատարակել

մի այնպիսի պարբերական թերթ, բոլորովին նոր հագուով, նոր ուղղութեամբ, որ գրգռէ, հարցեր հարուցանէ, և վերջապէս ստիպէ իրան կարգալ:

— Այդ բոլորը երևակայութիւններ են, լառաջ տարաւ բժիշկը. մեզանում ընթերցող հասարակութիւնը, այսինքն ժողովրդի բարձր և կրթեալ դասը, սչինչ կարօտութիւն չունէ մի հայ լրագրի: Նա կարգում է օտարազգի լրագիրներ:

Վիճաբանութիւնը աւելի տաքացաւ երբ Բաքուեանը ասաց.

— Ես բոլորովին ընդդէմ եմ ձեր կարծիքին, պարօն բժշկապետ, որովհետև այդ ձեր բարձր կամ կրթեալ կոչուած դասը թող բոլորովին չը կարգայ ևս, այդ փոյթ չէ...: Բայց դուք մոռանում էք մի բան, որ մենք ունենք ժողովրդի, մի մեծ դաս աւելի բազմաթիւ, աւելի թարմ ուժերով և աւելի անխարդախ կերպով պահպանուած իւրազգային առանձնութիւնների մէջ. — այդ դասն է

« մ բ ո խ ը, մենք նորա համար պէտք է գործենք:

Երիտասարդ պատմաբանը, որ լուրթեամբ լսում էր՝ ասաց արհամարհական ոճով.

— Ե՛հ, շատ զրեցինք մենք, թէ պարբերական թերթերի և թէ ամսագրերի միջոցով, բայց ի՛նչ դարձաւ, այդ քո « մ բ ո խ ը » էլի մնաց այն ինչ որ էր: Բաքուեանին զարմացրեց այդ պատասխանը.

— Եթէ ձեր գրուածքները օգուտ չը բերեցին հասարակութեանը՝ իմ կարծիքով այն էր պատճառը, որ նոքա չեն եղել ժողովրդի կեանքի առօրեայ, երեւոյթների և նորա պիտոյքների արտայայտութիւն, այդ գլխաւոր պայմաններից միւնն է լրագրութիւնը: Բայց հին սխօլաստիկական քարոզներ կարգալ, արբական հէքիաթներ պատմելիքի շահույքներին խոսել ծխել և նրբախն ժողովնակ պահանջել ընթերցող հասարակութեան

1001
1905



համակրութիւնը, այդ անկարելի բան է:

— Մեր ժողովուրդը լինելով մի կրօնական ազգ՝ հարկաւոր է այդպիսի բաներով գրաւել նորան և փարածել նորա մէջ ընթերցասիրութիւն: Այլ հնար չը կայ, պատասխանեց պատմաբանը:

— Ահա, այդտեղ է գլխաւոր սխալը, նորան պատասխանեց Բաքոսեանը: Փոխանակ զարգացնելու ժողովուրդը գրական մտքերով՝ դուք կրկին կամենում էք ծանրացնել նորա քունը միջնադարեան փիլիսոփայութեան մէջ:

— Ապա ինչ պէտք էր գրել:

— Ես ասացի, որ լրագրութիւնը պիտի լինի ժողովրդի առօրեայ պիտոյքների և պահանջմունքների արտայայտութիւն: Ահա թէ ինչ կարելի էր գրել, օրինակի համար. — թէ գրաւոր և թէ գործնական կերպով համոզել վաճառականներին կազմել ընկերութիւններ և կանոնաւոր աւելտրական տներ: Արհեստաւորներին քարոզել որ բաց անեն արուեստագի-

տական ուսուցման արան: Գիւղացիների համար աշխատել որ լինին գիւղատնտեսական ընկերութիւն, գիւղական փոխատու ընկերութիւն, և այլ դոցա նման նպատակաւ հիմնարկութիւններ:

— Այդպիսի քարոզներ մենք շատ անգամ լսել ենք, դոքա բոլորը երազներ են, մեզանում ոչինչ չէ կարելի գործել, ասացին բարձր ուսում ստացած պարոնները և արհամարհական ծիծաղով բոլորը հեռացան:

«Ողորմելիներ...», ասաց իւր մըտքում նոցա գնալուց յետոյ Բաքոսեանը:

Զ.

Կիւրակէ օր էր:

Արտեմ Պաւլիչը, վաղ առաւօտեան մի բաժակ կծովի թէյ խմելով՝ գնացել էր մէյդանը, որ ճաշի համար ձկներ և

այլ բաներ առնէ, որ այնուհետեւ եկեղեցի գնայ ու պատարագ տեսնէ:

Արտեմ Պաւլիչը, արդէն վաթսուն տարեկան մարդ էր: Նա իւր հաստ փորով, հաստ գլխով և բաւականին հաստ քսակով, ոչ միայն համարվում էր քաղաքի հարուստներից մինը, այլ ճանաչում էին նորան սրպէս շատ փորձուած ու խելացի մարդ: Նա ունէր հոյակապ երեք յարկանի տուն, խանութներ, մշակութեան դաշտեր, և երեք գոյնգգոյն մեդալներ, որոնք տօն օրերին միմեանց պօչից կապած, քարշ էր տալիս իւր շրլինքից:

Իսկ տիկին Մարիամը, այն բարի և առաքինի Աստուծոյ գառնուկը, շնչում էր մայրական սգուլբոյրը քնքշութեամբ: Նա գթառատ մայր էր և ժիր ու գործունեայ տանտիկին:

Տիկին Մարիամը տալիս էր իւր սպասաւորներին զանազան հրամաններ, երբ

երիտասարդ Բաքուեանը պատրաստվում էր տանից դուրս գնալ:

— Ելի գնում էք վիզիդներ անելու, Միշա, հարցրեց նորանից մայրը:

— Այո՛, մայր իմ, գնում եմ... պատասխանեց որդին խորհրդական ձայնով:

— Որ այգպէս է, Փրակդ հագիր:

— Սյուպէս էլ կարելի է գնալ:

— Այօթ չէ, ինչ կասես:

— Այն մարդիկը, որոնց մօտ ես այսօր այցելու թիւն պիտի անեմ, այնքան համեստ են և բարի, որ առանց Փրակի էլ կընդունեն ինձ:

Բանի ժամից լետոյ Բաքուեանը զընում էր մի նեղ և կեղտոտ փողոցի միջով: Նա անցաւ քաղաքի այն մասը, ուր լցնում էին աղբեր և անմաքրութիւններ, և շուտով յայտնուեցաւ մի կիսուներ շինութեան մէջ:

Այնտեղ մի քանի կիսամերկ մշակներ, շապիկները հանած, կոտորում էին այն մանրիկ արարածներին, որոնք հա-

նապագ ծծում էին նոցա արիւնը. մի քանիսը սառը գետնի վրայ թէք ընկած, փլվիւած պատերի տակին, զրոյց էին անում, իսկ մի քանիսը իրանց ետքին յիշելով, կամ կարօտած վաթանը (հայրենիք) միտ բերելով, տխուր-մեղօգիական ձայնով բայաթիք էին երգում...

Բաքոսեանը շատ զարմացաւ, նկատելով, որ նոքա իրան տեսածին պէս, փախան և թագնուեցան իրանց փոքրիկ, ծխից և միսից սևացած խրճիթները մէջը:

Նա ներս մտաւ խրճիթներից մինի մէջ: Խոնաւ արտաշնչութիւնը այդ անասնական բնակարանի, իսկոյն նորա ուղեղին զարկեց:

— Խնչո՛ւ դուք փախաք ինձնից, հարցրեց նա մի ալևոր մշակից, որ չէր դադարում իրան զլուխ տալուց:

Խեղճ ալևորի լեզուն կապուեցաւ: Նորա ընկերները ողորմելի ձայնով ասացին.

— Աղայ, ոտքերուդ մատաղ, Աստուած է վկայ մենք ամենքս բիլէթներ ունենք...

Բաքոսեանը չը գիտէր ինչով բացատրել այդ խօսքերը:

— Ես չեմ եկել ձեզանից բիլէթ պահանջելու, ասաց նա:

— Մենք այդպէս հասկացանք, աղայ, քեզ մատաղ ըլենք. այն չինովնիկը ամեն օր գալիս է... բիլէթ է ուզում, մենք ցոյց ենք տալիս. «էս մինը հին է, ասում է, էս մինը պատուած է, ասում է, էս մինը ֆարշիւ է, ասում է, ձեզ խիստ կը պատժեմ, ասում է»: Մենք վախում ենք, փող ենք տալիս նորան, որ մեզ սիբիր չուղարկէ...

— Խեղճեր... դառն կերպով հոգոյ հանելով հառաչեց Բաքոսեանը:

— Եւ ձեր բիլէթները ուղիւ են, հարցրեց նա:

— Ուղիւ են, որպէս արևը երկրն-

քում, աղայ, կամենում էք ցոյց կը տանք, ասացին բոլորը միաձայն:

— Հարկաւոր չէ. բայց դուք իմացէք, որ այն չինովնիկը ձեզ խաբում է, որ փող առնէ, միւս անգամ գայու լինի՞ ոչինչ չը տաք, միայն նորա անունը իմացէք. թէ ով է նա, որ ինձ ասէք:

— Ստուած քեզ երկար կեանք տայ, ազատի՛ր մեզ, աղայ ջան, նորա ձեռքից, աղաչում էին մշակները:

— Գուք միայն նորա անունը իմացէք, բաւական է:

Սոյն խօսակցութեան միջոցին Բաքոսեանը լսեց մի դառն հոգոց հանելու և հառաչանքի ձայն, նայեց խրճթի մը թին անկիւնում, աղլւաններով յատակած խոնաւ գետնի վրայ սլառկած էր մի մաշուած երիտասարդ: Սյդ հսկայի պարթեւական մարմինը, որ բռնել էր ահագին տարածութիւն, սարսափելի կմախքի էր նման: Նորա փալանը բարձի տեղ դը-

րած էր նորա գլխի տակ և մի քրքրուած վերարկու ձգած էր նորա վերայ:

Մի քանի րոպէ նայելով հիւանդին. «դա դեռ ևս կարող է ապրել», ասաց նա իւր մտքի մէջ և տխուր զգացմունքներով հեռացաւ այդ սարսափելի բնակարանից:

Քանի ժամից յետոյ մի կառքկանգնեցաւ այդ տան հանդէպ: Հիւանդին նորա մէջ դնելով, տեղափոխեցին մի խեղճ ընտանիքում, որին պատուիրած էր ինամք տանել նորա առողջութեանը:

Է.

Բաքոսեանը շտապով գնում էր մի լայն փողոցով, երբ լսեց մի ձայն, որ նորան կանչում էր: Դէպի յետ նայելով՝ նա ճանաչեց իւր ծանօթ բժիշկ Բարակեանցին:

— Ս., Ստեփան Գանելիչ, լաւ հանդիպեցար. ասաց երիտասարդը նորա ձեռ-

քը սեղմելով. ես այս ըուպէիս բժշկի մօտ էի գնում, շտապեցէք խնդրեմ, այս ինչ թաղը, այս ինչ փողոցում պարոն Ա...ի տունը. այնտեղ դուք կը գտնէք մի հիւանդ: Ահա՛, ձեր առաջին այցելութեան համար ես կանխիկ վճարում եմ, իսկ մընացածների համար նոյնպէս կը ստանաք ինձանից:

—Այս ըուպէիս, ասաց բժիշկը, և ընդունելով արծաթը, կամենում էր հեռանալ, երբ Բաքոսեանը կանգնեցրեց նորան:

—Ասացէք, խնդրեմ, դուք ունէք ժամանակ մի տեղ շարունակ շաբաթը երկու անգամ այցելութիւն գործել:

—Այո՛, պատասխանեց բժիշկը:

—Ուրեմն եղէք այնքան բարի, այս երեկոյ եօթն ժամին ինձ մօտ անցնել, այդ մասին խօսենք:

—Շատ լաւ, ասաց բժիշկը և հեռացաւ:

Բաքոսեանը հասաւ տուն, երբ բաւական անցել էր ճաշից:

—Ո՛ւր էիր, այդքան ուշացար, Սիշա, դու միշտ ստիպում ես քեզ սպասել, ասաց նորա մայրը:

—Սի բարեկամի մօտ էի... այո՛, ուշացայ, պատասխանեց երիտասարդը:— Բայց դուք կարող էիք և առանց ինձ ճաշել:

—Սի՛թէ առանց քեզ ես կարող եմ բերանս պատառ հաց դնել:

—Ի՛նչ շատ ես սիրում, մայր իմ, ասաց որդին և գրկեց նորան:

Նոքա մտան սեղանատուն, ուր ամեն բարիքներով լի, փառաւոր սեղանը սպասում էր նոցա: Երիտասարդը նըստաւ մօր մօտ, իսկ Սրտեմ Պաւլիչը հաւաքեց իւր շուրջը փոքրիկ երեխաներին...:

—Ի՞նչ սովորութիւն է այդ, հայր, դուք չէք խօսում երեխայոց հետ հայերէն, ասաց երիտասարդը:

—Հայերէն սորվելով ի՞նչ պէտք է

դառնան, որդի, հայեվարը հիմի ո՞վ է խօսում, պատասխանեց Արտեմ Պաւլիչը:

— Ամեն երեխայ պէտք է սկզբից իւր մայրենի լեզուն սովորէ, այնուհետև օտար լեզուներ սովորելը նորա համար դժուար չէ: Այդ է պահանջում արդի մանկավարժութիւնը:

— Ասենք թէ մենք հայերէն խօսեցինք երեխաների հետ, մէջ մտաւ տիկին Մարիամը. — քօժ ու բջից էլի պիտի օտար լեզու սովորին...

— Այդ է վատը, որ դուք մեր տունը լցրել էք օտարազգի ծառաներով և աղախիններով, որոնք երեխաների փչանալու գլխաւոր պատճառն են դառնում:

Արտեմ Պաւլիչը երկար չը խօսեց այդ առարկայի վերայ, նա ամբողջ ճաշի միջոցին գանգատվում էր թանգութիւնից:

— Դժուար է էլի հիմա ապրուստը, ասում էր նա դժգոհութեամբ, էս օր մէլընում էնքան ման եկայ, մինչև ժա-

միցն էլ յետ ընկայ, հագիւ թէ կարացի մի քիչ ձուկը և լաւ դօշ ճարել, էն էլ քնչ գնով Աստուած ազատէ...

— Դուք չէք մտածում աղքատների համար, հայր իմ, այն խղճալիքը քնչ պէտք է անեն, հարցրեց երիտասարդը:

— Նոքա առանց ձուկի էլ կարան եօլայ գնալ, որդի, բայց մեր բանը դժուար է, մերը...

— Գոնե՛ս, ուտելու ցամաք հաց պիտի ունենան:

— Ցամաք հաց ճարելը հեշտ է, որդի, բայց մեր բանը դժուար է, որ ղալու-փլալը առանց աղջանաբաթի չենք կարացի ուտել:

— Ինչո՞ւ մենք միշտ ղալու-փլալ պիտի ուտենք, և այդպիսի փառաւոր տներում ապրենք, բայց աղքատը զիջելը իւր գլուխը գնելու մի տեղ չունենայ, և կարօտ մնայ պատառ հացի: Ինչո՞ւ նոցա համար չը պէտք է մտածենք:

Արտեմ Պաւլիչի դէմքի վերայ վազեց մի արհամարհական ծիծաղ:

— Ինչո՞ւ... կրկնեց նա խորհրդական ձայնով: — Եղբան որ կարգացել ես, էս էլ չես սորվի, թէ ինչու, — էնդուր վուր Աստուած աղքատին աղքատ է ստեղծել, հարստին՝ հարուստ. մեզ տուել է փլաւ, նոցա՝ ցամաք հաց: Թէ փլաւը, թէ ցամաք հացը բոլորը Նորան է պատկանում. ումը ինչ կուզէ՝ էն կու տայ, ո՞վ կարայ Նորա ձեռքը բռնել, մեռնի՛մ Նորա մեծ գորութեանը...

Եւ Արտեմ Պաւլիչը սկսաւ ջերմեռանդութեամբ խաջակնքել իւր երեսը:

«Այդ էլ մեր եսականների վարդապետութիւնը»... ասաց իւր մտքում երկտասարգը և հեռանալով ճաշի սեղանից, ասաց հօրը.

— Բայց դուք մոռանում էք, հայր, որ Աստուած հարուստներին պատուիրեց, որ նոքա ողորմութիւն անեն աղքատներին:

Վերջին խօսքը համարեա՞ չը լսեց Արտեմ Պաւլիչը:

Ը.

Բաքոսեանը արգէն սկսաւ յայտնուիլ նոյն քաղաքի հասարակութեան բարձր և միջին դասերի զանազան խաւերումը: Տիկին Նասիրովն ունէր վե չէր:

Երևելի վաճառական հանգուցեալ Նասիրովը, մեռնելով իւր լիսունամեայ հասակում՝ թողեց իւր միակ դստերը, գեղեցիկ Նատին, ահագին հարստութիւն: Նատօն, աւարտելով իւր ուսումը նոյն քաղաքի իգական սեռի բարձր դըպրոցում՝ իւր մօր հետ, որպէս ռամկօրէն ասում են, «եղի ու մեղրի մէջ էր ապրում»: Վեչէր, բալ, թատրոն, կրուժօկ, պլիկնիկ. բախտաւոր էին այդ գերդաստանի աւօրեայ պիտոյքներն:

Փառաւոր դահլիճը վառվում էր ամենայն շքեղութեամբ: Մի տեղ երկայն

սեղանի բոլորտիքը շարուած՝ կանայք, աղջկերք և տղամարդիկ, լօտօ էին խաղում:

Գասլիճի կից փոքրիկ սենեակներում տղամարդիկը, խուճ-խուճը առանձնացած՝ թուղթ էին խաղում: Մի անկիւնում գեղեցիկ Նատօն, իւր փափուկ մատները վազեցնում էր պիանօի լեզուակների վերայ և հիացնում էր լսողներին:

Իսկ հաստիկ, մախմուրի և մետաքսի մէջ պատած տանտիկինը անդադար այս և այն կողմն էր վազում, հիւրեր էր ընդունում, մինի հետ քաղցրախօսում էր, միւսի հետ ծիծաղում և շատերին իւր Նատօի ուսումը և գիտութիւնն էր պատմում:

Գասլիճի մի այլ անկիւնում մի քանի օրիորդներ առանձնացած՝ այսպէս խօսում էին միմեանց հետ:

— Գու հաւաստի գիտե՞ս, Անիչկա, որ նա անպատճառ կը լինի այս գիշեր.

հարցրէց ուսաց լեզուով սեւաչեայ Սօֆիօն իւր մօտ նստած շիկահեր օրիորդից:

— Գիտեմ, ինձ Նատօն ասաց, թէ մայրս նորան ևս հրաւիրած է, պատասխանեց նոյն լեզուով Անիչկան, աւելացնելով. — Ախ, որպիսի հրաշալի տղամարդ է նա Սօֆի. . .:

— Ձը լինի սիրահարուած ես, Անիչկա, ծիծաղելով հարցրէց նոցա մօտ նստած սեուկ օրիորդը Բարսամենց Օլգան:

— Ձէ, Օլգա, ինձ միայն դուր է գալիս նորա այնպէս ճաշակով հագնուիլը, շնորհաշուք վարմունքը և գեղեցիկ խօսակցութիւնը:

— Իու որտեղ ես տեսել նորան, հարցրէց Սօֆիան:

— Քանի օր առաջ նա իշխան Փառասիրեանցի բալումն էր. աղջկերքը խելքից էլած էին նորա համար, թէև ոչ ոքի հետ չէր պար գալիս:

— Ե՛հ, նա բողբոլվին տարապայման մի մարդ է, մէջ մտաւ սևուկը:

— Ի՛նչ հաճութիւն նորանից... չես գիտում ի՛նչ լեզուով խօսես նորա հետ. ինքը կտարատում է միշտ հայերէն, և ով որ այդ լեզուն չէ հասկանում՝ նորա հետ գերմաներէն և ֆրանսերէն փիլիսօփայութիւններ է անում...

— Ա՛յ, Մարիա, սևուկի խօսքը կըտրեց Անիչկան, նա ուսներէն լաւ է իմանում, միայն այնպէս ձևացնում է, որպէս թէ չը գիտէ:

Սոյն միջոցին տանտիկինը, ուրախութեան ծիծաղը երեսին՝ ընդունում էր մի հիւր:

— Ահա՛ նա, ահա՛ նա, հեզիկ շըշնջացին օրիորդները:

Նատօն թողեց պիանօն և վեր կացաւ տեղիցը: Միւս աղջկերքը նոյնպէս թողեցին իրանց մասլահաթները, վեր կացան և սկսան թիթեռնիկի նման պտտուիլ դահլիճի մէջ:

Թ.

Տանտիկինը, տանելով իւր հիւրին դստեր մօտ, — ահա՛, իմ աղջիկս. Նատալիա Եսսիպովնա, ներկայացրեց նա: Եւ դառնալով դէպի երիտասարդը — պարոն Միքայէլ Բաքոսեանը, ասաց նա: Եւ սկըսաւ ծանօթացնել նորան միւս հիւրերի հետ:

Միակ ծանօթը, որին հանդիպեց այնտեղ Բաքոսեանը՝ իւր հեռու ազգական տիկին Շնորհաբաշխը էր, նոյն քաղաքի վեչէրների հերոսուհին:

— Լաւ է, դու էլ երևացիր, Միշա, ասաց նա, ուրախութեամբ զիմելով դէպի երիտասարդը:

— Միթէ իմ երևնալս այդքան հաճութիւն է բերում ձեզ, ժպտալով հարցրեց երիտասարդը:

—Բայ, չե՞ս իմանում որ այդպէս է. բայ, ազգականութիւնը ինչի՞ համար է: Վերջին խօսքերը այնքան բարձր կերպով արտասանեց տիկինը, որ շատերը լսեցին: Կարծես, նա պարծենում էր այդ խօսքերով:

—Ուրեմն ես կաշխատեմ շուտ-շուտ երևնալ ձեզ, պատասխանեց Բաքոսեանը, ինքը չը հաւատարով իւր խօսքերին:

—Այն ժամանակ քեզանից շնորհակալ կը լինեմ, ասաց տիկինը, և մօտենալով՝ նորա ականջին քրթմնջաց.— Տանտիրոջ աղջկան լաւ մտիկ արա՛ւ... Ինչ իւզալի տեղ է... Եւ ծիծաղելով հեռացաւ երիտասարդից:

Նստօն խիստ քաղաքավարի կերպով ձեռքը տալով երիտասարդին, սկսաւ նորա հետ անց ու դարձ անել դահլիճի մէջ: Երիտասարդը, մի կողմնակի հայեացք ձգելով խաղացողների վերայ, «Ահա մեր քաղաքացոց բոլոր գուարճութիւնը», ասաց իւր մտքում:

Նոքա անցներով դահլիճը, մտան մի փոքրիկ սենեակ, ուր հրաւիրեց երիտասարդին օրիորդը, որտեղ կային մի քանի պատուաւոր հիւրեր և զբաղուած էին նոյնպէս թղթախաղով:

Բաքոսեանը նստեց աթոռի վերայ և հեռուից նայում էր խաղացողների խումբին:

—Դուք ինչ խաղ էք խաղում, դարձաւ Նստօն դէպի երիտասարդը Փրանսերէն լեզուով:

—Ես դժբախտաբար ընդունակ չեմ եղել որ և իցէ խաղ սովորելու, հեղնօրէն պատասխանեց Բաքոսեանը:

—Սպա ինչով պարապեցնեմ ձեզ:

—Միթէ դուք բաւական չէ՞ք, եթէ այնքան բարի կը լինէք զբաղեցնել ձեր հիւրին:

Օրիորդը կարմրեց և նստեց երիտասարդի մօտ: Նոքա սկսեցին խօսել արտասահմանի մասին: Բաքոսեանը պատմեց նորան շատ բաներ, թէ որպէս են

ուսանում Շվէյցարիայում աղջիկները, թէ՛ սրպէս կրթուած են Պօլսում և Չմիւռնիայում հայ օրիորդները: Այս զրոյցները վերջանալուց յետոյ, Նատօն հարցրեց.

— Ասացէք, խնդրեմ, թէ՛ ներգործութիւն է անում ձեզ վերայ մեր քաղաքը և այստեղի կեանքը:

— Ներգործութիւնները ինձ վերայ, համարեան, միւսնոյն տխուր ազդեցութիւնն ունեն, թէ՛ այստեղ և թէ՛ արտասահմանում, պատասխանեց Բաքոսեանը...

— Մենք ինչով ենք մեղաւոր, որ մեզ չը սովրացրին մեր լեզուն. պատասխանեց Նատօն զգալի կերպով: Ընտանիքում մեր ծնողներն արգելում էին խօսել. «Հայերէնը մօզայ չէ», ասում էին...

— Այո՛, այդպէս են վարվում իրանց զաւակների հետ այստեղ ծնողները... վերջացրեց Բաքոսեանը և տխրութեան ամպը պատեց նորա դէմքը:

Օրիորդը, նկատելով որ իւր խօսքերը երիտասարդի վերայ վատ տպաւորութիւն ունեցան՝ փոխեց խօսքը, հարցնելով.

— Ինչով էք պար պում դուք այժմ:

— Իմ պարապմունքներն այնքան չնչին են, որ պէտք է ասել, թէ՛ ոչընչով, պատասխանեց երիտասարդը:

— Ես լսեցի, դուք կամենում էք հրատարակել մի լրագիր:

— Այո՛, մի այդպիսի նպատակ կայ:

— Ի՞նչ լեզուով:

— Հայերէն լեզուով:

— Հայերէն լեզուով լրագիր... բացականչեց օրիորդը մի քնքոյշ արհամարհական կնճիռ ձևացնելով իւր գեղեցիկ դէմքի վերայ:

ժ.

Հետևեալ կիւրակէ օրը Բաքոսեանը դարձեալ այցելութեան գնաց մեր ըն-

Թերցողին նախաճանօթ տանը, ուր կենում էին մշակներ: Բայց այս անգամ նոքա չը փախան երիտասարդից, այլ ընդունեցին նորան որպէս իրանց բարեկամին:

Նոքա պատմեցին որ բիլէթ պահանջող չինովնիկը այլ ևս չէ գալիս, և նորա փոխարէն յաճախում է նոցա մօտ մի բժիշկ Ստեփան Գանելիչ Բարակեանց անունով. որ հրամայեց տանտիրոջը միշտ մաքուր պահել նոցա բնակութեան տեղը, որ նոցանից ամենևին փող չէ առնում, և բոլորովին ձրի դարմաններ է տալիս հիւանդներին: Եւ մշակները շնորհակալութեամբ օրհնում էին այդ բոլոր փոփոխութեանց պատճառ եղող անձին:

Բաքոսեանը նստեց տախտակով կապած մի թախթի վերայ, որ նոր շինուած էր մշակների քնելու համար, և խնդրեց որ նոքա նոյնպէս նստէին:

— Ասացէք, խնդրեմ, թնչ երկրից էք դուք, հարցրեց նա:

— Ե՛հ, աղայ-ջան, ամեն երկրից մարդիկ կան մեր մէջ, պատասխանեց մի ալևոր: — Այստեղ կան, Տաճկաստանից՝ մշեցի, բաղիշեցի, վանեցի, արզրումցի և մինչև անգամ ատանացի: Պարսկաստանից՝ խօեցի, սալմաստեցի ուրմեացի, մարաղացի, մուժումբարցի և մինչև անգամ սպահանցիք: Կավկազից՝ հին-նախիջեւանցիք, երևանցիք, ագուլեցիք և այլն:

— Ի՞նչ պատճառով դուք թողել էք ձեր երկիրը, ինչո՞ւ դուք չէք կենում ձեր հայրենիքում:

— Գօ խօքուն զուրբան ըլեմ, աղայ ջան, պատասխանեց մի ալևոր սալմաստեցի, վա՛վ կը թողնի իւր վաթանը, իր օջախը, վա՛վ իր օղլուշաղը, կերթայ դարե-զուրբաթ վըլաեթ, ահար էն մաութը նաչար չըլի, հաղդարի շարմանդայ չըլի...: Մեզնէ ըմէն մէկը մէ դարդ ունի, մէ ցաւ ունի, որ դար խըմար ընկերի դիարբադիար...: Թուրքի ռայաթ ենք, աղայ ջան, մէ թեխանց աղանի գօ-

անելի, խարջ ուղեւորի մէջ թեխանց դիւաննի զօռ անելի, մեզիկ թաւնելի, մէջ թեխանց պառքնտէրը մեր լաճերը փողի աւազ տանելի որ տաճկցուցի... էտէնց խազարը մէկ զուլումներ կան, որ մէկը ասեմ... էլ մեր երկրի մէջ չէնք նալի աշխատանք անել, անօրէնի երկիր է, թուրքերը գլուխքերուս տասեն, միր դադածը խլես են: Զաներուս դարդէն էկիր ենք զարիւր-զուրբաթ վրլաեաթ, որ մէջ քանի շահի փող դադենք, տանենք մեր քըլֆաթը պախենք...

Ալևորը վերջացրեց իւր խօսքը և նորա շիջած աչքերու մէջ պահուած էին մի քանի կաթիլ արտասուք, որ սկսան գլորուիլ սպիտակ մօրուքի վրայ:

Բաքոսեանի սիրտը խորին կերպով խոցուեցաւ այդ խօսքերից...

Ալևոր սալմաստոցու խօսքերը այնպէս ազդեցին Բաքոսեանի սրտին, մինչ նա լացելու չափ վրդովուեցաւ: Բայց զսպելով իւր սրտի կսկիծը, հարցրեց.

— Այստեղ ի՞նչ է ձեր պարապմունքը:

— Ամեն օր վաղ առաւօտեան մեր փալանները առած, զնում ենք մէյդան, կամ փողոցներում վզներս ծռած, կանգնում ենք, սպասում ենք, որ մի մարդ մի բեռն մեր շալակը տայ, տանենք տեղը հասցնենք, որ մի քանի կոպէկ վարձ ստանանք, ասացին մի քանիսը:

— Ձեզանից բոլորը այդ գործով են պարապած:

— Ո՛չ, կան մեզանից այնպիսիներ, որ ճանապարհներ ուղղելու վրայ են բանում, կան որ տներու շինութեան վերայ են բանում, բայց փօղբատչիկը ամենին թալանում է, «վնաս արեցի». ասելով՝ վարձիցն կարում է: Մեզանից բախտաւոր են այնպիսիները, որոնք կամ քարվանսարաններում օղբաշիններ են, կամ զաւօղներում և կամ Փաբրիկաներումն են բանում:

— Դուք բացի կիւրակէները չունի՞ք ուրիշ ազատ օրեր:

—Ո՛չ աղայ-ջան, կիւրակէ և տօն օրերը միայն չենք գործում:

—Ասացէք, խնդրեմ, եթէ մինը ձեր այդպիսի անգործ օրերում, որ և իցէ առարկայի վերայ ձեզ դասախօսութիւններ անելու լինէր, դուք կը լսէ՞ք նորան:

—Քարո՞ց կարդար:

—Հա՛, այդպիսի մի բան:

—Ինչո՞ւ չէինք լսի, կիւրակէները աշուղ է գալիս, մեզ համար երգում է, հէքիաթներ է ասում, մենք նորան փող էլ ենք բաշխում:

—Ուրեմն ես եկող կիւրակէ կը գամ ձեզ քարոզ կը տամ, առանց ձեզանից փող առնելու, վերջացրեց Բաքստեանը և հեռացաւ:

Մշակները զարմացան, թէ նա որպէս պէտք է քարոզ կարգար իրանց, երբ քահանայ չէր:

ԺԱ.

Նոյն առուր երեկոյեան պահուն Արտեմ Պաւլիչը կանչեց որդուն իւր սենեակը: Այնտեղ նստած էր մի վրացի իշխան, կարմիր մախմուրի արխալուղով, ոսկի ժապաւէնով եզերաւորած կաբայով և արծաթապատ խանջալով:

Երիտասարդը քաղաքավարութեամբ գլուխ տուաւ նորան:

—Իմ որդիս Միխայէլ Արտեմիչը:

—Կնիազ ձիանճուէլիձէ, ծանօթացրեց նորան Արտեմ Պաւլիչը:

Երիտասարդը նստեց:

—Քիտէս, ինչ բանի համար կանչեցի քեզ, Միշա, ասաց Արտեմ Պաւլիչը մի այնպիսի լեզուով, որ իշխանը հասկանար:—Կնիազը իմ հինուցուայ բարեկամս է. շատ օրինաւոր մարդ է, Աստուած է վկայ, զորս ողորմած հոգի հայրը, աւելի լաւ մարդ էր Աստուած իր

հոգին լուսաւորէ— Կախեթումը առաջին
օջախն է դորա հօր տունը:

Երիտասարդը անհամբերութեամբ
սպասում էր, թէ ինչո՞վ կը վերջանայ
հօր այդպիսի շողոքորթող գովասանքնե-
րը:

— Կնիազը, առաջ տարաւ Արտեմ
Պաւլիչը— Աստուած իրան երկար կեանք
տայ— ինքն էլ շատ մեծ մարդ է Կախե-
թումը: Բայց ջէր ջէ հիւ է (է՛հ մենք
էլ ենք ջէհիւ էլէլ...) անցեալ գիշեր
կուբումը մի քանի հազար տանել է
տուել. (վնաս չունի, ջէհէլութիւն է,
մենք էլ ենք էդպէսի բաներ շատ ա-
րել...): Հիմի փող է հարկաւորել իրան,
եկել է, ասում է, Արտեմ Պաւլիչ, քե-
զանից աւել բարեկամ չունիմ, այդ իմ
նեղութեան ժամանակին դու ինձ պիտի
օգնես, մի քանի հազար մանէթ ինձ փող
պիտի տաս: Ասում եմ, Միշիս արեւը գի-
տենայ, փող չունիմ. չէ հաւատում, ա-
սում է, Արտեմ Պաւլիչ, ինչպէս որ ըլի՞

պիտի մէկ տեղանց ճարիս, տաս: Հիմի
ինչ պիտի անինք, Միշա ջան, միը կը-
նիազն է, ինչպէս որ ըլի՛ պիտի ուրիշից
ճարենք նորան տանք, դու գիտես, որ
ես հիմի փող չունիմ:

— Ես չը գիտեմ, որ..., ասաց Բա-
քոսեանը:

— Հօրէն, Միշա, էն անդուկումը—
շուտով կտրեց Արտեմ Պաւլիչը սլու-
խօսքը— Կնիազը մի քանի բաներ էլ բե-
րել է, որ գրաւ թողնի մեզ մօտ, գնա
մտիկ արա:

Երիտասարդը վեր կացաւ, բաց ա-
րաւ սեղանի վերայ դրած փոքրիկ արկղի-
կը, որի մէջկային ոսկեղէն գոհարազարդ
մի քանի կանացի թանգազին բաներ, որ-
պիսի են՝ ապարանջաներ, մանեակ, մա-
հիկը (մեղալիօն) և այլն:

— Իոքա Միշա, կնէյնա Նինուշ-
կայի ապրանքն են. գիտեմ, որ ուրիշ մար-
դու չի մաւայ կենայ, բայց կնիազը լաւ
է ճանաչում ինձ, որ ես Արտեմ Պաւլիչն

եմ, օջովին խայանաթուփիւն չեմ անի...

—Վերջապէս ինչ էք կամենում ինձանից, համբերութիւնը հատնելով հարցրեց երիտասարդը:

—Հա՛, էն էի ուզում ասել, Միշա, վեր առ առաջ մին վէքսիլ գրէ 3000 մանէթը մինչև հինգ ամիս ժամանակի, յետոյ մին պայման գրէ, էդ բաները, որ կնիազը բերել է՝ պայմանի մէջ մին մին նշանակի՛ր, եթէ մինչև հինգ ամիս փողն չը ստանամ, կնիազը պարտաւոր է բացի այդ 3000 մանէթը՝ 500 մանէթ էլ շտրաֆ տայ ինձ, ես էլ իրաւունք ունենամ գրաւները ծախել, իմ փողը վեր առնել:

—Գիտէ՛ք, կնիազ, դարձաւ նա դէպի վրացին. ես մէկ ճշմարիտ մարդ եմ, իմ ամեն բանը դրուստութիւնով է, լաւ է, որ էս գլխսմէն ասեմ, որ դուք էլ հասկանաք հէսաբը. ես քեզ 2500 մանէթ նազդ փող կը տամ. թումանը երկու ապասով մէկ ամիսն 100 մանէթ

շահ կու բանէ, էդ էլ հինգ ամսու՛մը կանէ 500 մանէթ. դորա համար եմ ասում, որ վէքսիլը 3000 մանէթ գրէ: Իմ մամի հոգին գիտենայ, որ իմ կեանքումս էսպէս էժան օջովին փող շահով տուած չունիմ: Բայց ինչ անիմ, բարեկամ մարդ ես, խաթրիցդ չեմ անց կենում...

—Իհարկէ, Արտեմ Պաւլիչ, մեր բարեկամութիւնը մի օրուայ համար չէ խօմ, պատասխանեց իշխանը համաձայնութեամբ վերոյիշեալ պայմաններին:

—Գէ, վեր առ գրէ, դարձաւ Արտեմ Պաւլիչը դէպի որդին:

—Ես այդպիսի պայման չեմ կարող գրել, պատասխանեց երիտասարդը հայերէն լեզուով, որ իշխանը չը հասկանար:

—Ինչո՛ւ, հարցրեց հայրը աչքերը լայն բացելով:

—Նորա համար որ, առաջին՝ այդ մարդը օրէնքով իրաւունք չունի իւր կրօնը սեպհականութիւնը գրաւ դնելու,

երկրորդ՝ բոլորովին օրէնքի հակառակ բան է հինգից աւել տոկոս առնել:

Արտեմ Պաւլիչի աչքերը վառուեցան բարկութիւնից:

— Իէ, գնա՛, հեռացիր, որ էդ մարդը բան չը հասկանայ:

Որդին հեռացաւ:

«Էդ զակօնները ես լաւ գիտեմ», ասաց ծերունի վաշխառուն իւր մտքի մէջ, «դժուար բան չէ, կնկան էլ ձեռք քաշել տալը պայմանի վրայ»:

— Գիտես, կնիազ, դարձաւ Արտեմ Պաւլիչը որդու գնալուց յետոյ դէպի իւր գոհը:— Իմ Միշէն զագրանիցայէն գալու ժամանակ ճանապարհին հիւանդացել էր, մինչև հիմի էլ տաքցնում է, ձեռքերը դողում են, չէ կարացի գրել. խնդրեմ մի փոքր սպասել. ես էս բոպէին կանչել կը տամ իմ գրագրին, այս օր կիրակի լինելու համար. տանը չէ:

— Շատ լաւ, ես կը սպասեմ. ասաց իշխանը:

ԺԲ.

Մի օր երեկոյեան պահուն Բաքոսեանը, դառնալով տուն այնտեղ գտաւ տիկին Շնորհաբաշխին: Նորա մօտ նըստած էին Արտեմ Պաւլիչը, և տ. Մարիամը թէյ էին խմում:

Տիկին Շնորհաբաշխը խօսում էր, ծիծաղում էր, հանաքներ էր անում և զանազան ընտանիքներում պատահած հետաքրքրական անցքեր էր պատմում:

Տեսնելով երիտասարդին՝ բոլորի դէմքի վերայ երևաց մի հաճութեան ժրպիտ:

— Թողէք ես ասեմ, ձայն տուաւ տ. Շնորհաբաշխը:

— Ձէ, ես կասեմ. նորա խօսքը կըտրեց տ. Մարիամը:

— Բա՛, ես չեմ կարայ ասել; մէջ մտաւ Արտեմ Պաւլիչը:

— Ի՞նչ էք ուզում ասել, կրկնեց երիտասարդը, ձեռք տալով վիճողներին:

—Քեզ ուզում են նշնել, առաջ ընկաւ տ. Ծնորհաբաշխը:

—Այդ լաւ բան է, ժպտալով պատասխանեց երիտասարդը:

—Բա վատ բան է... ուրախութեամբ ձայն տուաւ Արտեմ Պաւլիչը:

Տ. Մարիամը խորին հոգեզմայլութեան մէջ էր:

—Թէ գիտենաս ո՛ւմ վերայ, Միշա, էս ըոպէիս ուրախութիւնից վեր-վեր կը թռչես, առաջ տարաւ տ. Ծնորհաբաշխը:

—Աստ, ո՛ւմ վերայ, մի վախի՛ր, չեմ թռչկոտի, մեղմ ձայնով պատասխանեց Բաքոսեանը:

—Դու ուզում ես, որ էդպէս հեշտութեամբ գիտենաս. քնչ կը տաս, որ ասեմ:

—Ինչ որ ուզում ես կը տամ, եթէ չասես:

—Գորան մտիկ տուր, գորան, նազ էլ

է անում, դարձաւ ծիծաղելով դէպի Արտեմ Պաւլիչը տ. Ծնորհաբաշխը:

—Նազ կանէ, բա քնչ կանէ, կրկնեց Արտեմ Պաւլիչը որդու վերայ հպարտանալով:

—Հանաքը դէնը կենայ, շարունակեց տ. Ծնորհաբաշխը, կրկին զառնալով դէպի երիտասարդը, Միշա, ուզում ենք Նասիրովենց Նատօն նշնել քեզ համար: Ի՛նչ ազջիկ է, սիրուն, խելացի, ուսումով, հունարով, մի խօսքով, մօզնի աջջիկ է, էլի:

—Երիտասարդը լուռ լսում էր:

—Դու փո՛ղն ասա, Աննա Կիրիլովնա, փո՛ղը, ձայն տուաւ Արտեմ Պաւլիչը:—Հօր մի հատիկ զաւակ է, էնքան տուն, տեղ, էնքան հարստութիւն նորան է պատկանում:

—Մի խօսքով, իմ Միշիս լայաղ աղջիկ է, մէջ մտաւ տ. Մարիամը:

—Գուցէ դոքա բոլորն ուղիղ լինեն... միայն ես դեռ ևս պսակուելու

նպատակ չունեմ, պատասխանեց Բաքոսեանը սառնութեամբ:

— Դու էլ մեր քաղքի տղերքի պէս սպասում ես մինչև մազերդ սպիտակին, ակռէքդ թափին, էն ժամանակ պսակուիս, կշտամբելով ասաց տ. Շնորհաբաշխը:

— Ո՛չ, այդ չէ պատճառը, միայն ես այժմ յի այնպիսի անորոշ գրութեան մէջ եմ, որ ինձ դեռ ևս վաղ է մտածել ամուսնութեան վերայ:

Արտեմ Պաւլիչը սկսաւ զարմանալ:

— Էլ ի՞նչ ես ուզում, ի՞նչ, ձայն տուաւ նա, հարստութիւն ես ուզում— ունի, ուսում ես ուզում— ունի, գեղեցկութիւն ես ուզում— ունի: Գանա էդ պիսի աղջիկը հալվալ է, որ երբ ուզենաս բաղաւիցը առնես:

— Սյդ ձեր ասածների դէմ ես վիճելու առիթ չունիմ, միայն ասում եմ, որ ես դեռ պսակուելու մասին չեմ մտածում:

— Էլ ի՞նչ բանի վերայ պիտի մտածես, ասա, խնդրեմ. մեր քաղքումը ինչքան երևելի տղերք կան՞ Նատօին մուշտարին են. ոչ մէկին չեն տալիս, ուզում են քեզ տալ, էնդուր համար, որ նորա հէրը իմ լաւ բարեկամս էր, ջէր դու զագրանիցումն էիր, որ մենք մէկ-մէկու խօսք տուեցինք, որ խնամի դառնանք: Հիմի նա գնաց էն աշխարքը, ես մնացի, բա՛, ես իմ խօսքը չը պիտի կատարեմ, մի էդպիսի աղջիկը, մի այդքան հարստութիւնը պիտի թողնեմ ուրիշը ասնէ:

— Ես զարմանում եմ, հայր, որ դուք ձեր աչքի առջև ունիք այդ չնչին հաշիւները, որոնք ամուսնութեան մէջ ոչինչ նշանակութիւն չունին: Դուք չէք մտածում մի բանի վերայ, արդեօք Նատօն կարող է ինձ սիրել, կամ ես կարող եմ նորան սիրել:

— Հա՛, կը սիրէ, կը սիրէ, երբ քո կնիկը դարձաւ՝ իհարկէ կը սիրէ քեզ:

— Այդ խնդրի լուծումը այդքան հեշտ չէ: Բայց նորից ես կրկնում եմ, թե դեռ պսակուելու նպատակ չունիմ ես, պատասխանեց Բաքոսեանը, և դառնալով դէպի տ. Շնորհաբաշխը, ասաց.

— Ներեցէք, խնդրեմ, ես պիտի գընամ իմ սենեակը, մի քանի հիւրեր ունեմ այս գիշեր ընդունելու:

— Այլ քեզ խեղք... զարմանալով բացականչեց որդու գնալուց յետոյ Արտեմ Պաւլիչը:

ԺԳ.

Անցան մի քանի ամիսներ:

Բաքոսեանի մօտ լինում էին փոքրիկ ժողովներ, ուր հաւաքվում էին մի քանի աղքատ ուսանողներ, մի քանի թափառաշրջիկ դերասաններ, բոլորը կեանքի հարուածների տակ ճնշուած և մաշուած երիտասարդներ:

— «Զվեմն, զոր անարգեցին շինողքն»

նա եղև գլուխ անկեան», ասաց մարդու թեան մեծ Բաշեկաշգիչը — Խօսեց մի օր Բաքոսեանը ժողովքի մէջ:

— Դուք պարոններ, ժողովրդից արհամարհուած մարդիկդ, դուք շատ բաներ կարող էք շինել. որովհետև ձեր մէջ ոյժ կայ, ձեր մէջ կեանք կայ, ձեր մէջ պահպանուել է ժողովրդական տարրը:

Ժողովքը ուշադրութեամբ լսում էր:

— Ես միտք ունեմ, առաջ տարաւ Բաքոսեանը, կազմել մի խմբագրութիւն մի նոր պարբերական թերթ հրատարակելու, որովհետև տեղւոյս հրատարակուած լրագիրների ուղղութիւնը ես բոլորովին վնասակար եմ համարում:

— Ի՞նչ անուն պիտի տաք այդ լրագրին, հարցրին մի քանիսը:

— Նորա անունը կը լինի «Գ ո ե հ ի կ»: Այդպիսի կոչումը համապատասխան է այն նպատակին, որին պիտի ծառայէ այդ թերթը, այսինքն բարւոքել

գուեհիկ դասի, աւելի լաւ է ասել, մը-
շակ դասի գրութիւնը:

— Այդ շատ հիւանալի միտք է, ձայն
տուին բոլորը: Մշակ դասը մեզանում
սարսափելի ճնշման ներքոյ է:

— Ես արդէն քանի շաբաթ է սկը-
սել եմ քաղաքիս մշակներին դասախօ-
սութիւններ անել, փիլիսոփայական հա-
յեացքով, որպէս զի նոցա մէջ նախ և
առաջ կարողանամ մտցնել անհատակա-
նութեան սկզբունքները, որ նոքա ու-
նենան ինքնաճանաչութիւն իրանց իրա-
ւունքների և պարտաւորութիւնների:

— Այդ անպատճառ հարկաւոր է: —
Միայն պէտք են և գործնական միջոց-
ներ նոցա նիւթականը ապահովելու, ա-
սաց մինը:

— Ես բոլորովին համաձայն եմ ձեզ
հետ, պատասխանեց Բաքոսեանը: Ես ար-
դէն նոցա ուսուցանում եմ կանոններ
մի «ինքնօգնութեան փոխա-
տուր կերութեան»:

Բացատրեցէք խնդրենք, այդ ըն-
կերութեան նպատակը:

— Նորա նպատակն այն է, որ մշակ-
ները խմբից կազմուած ընկերութեան ա-
մեն մի ան ամբ իւր աշխատանքի մի ո-
րոշեալ մասը կը մտցնէ ընկերութեան
կասսան: Այնտեղ մի նշանաւոր դրամա-
գլուխ հաւաքուելուց յետոյ, ընկերու-
թիւնը կը ստանայ վարձ: Այնուհետև մը-
շակները, ճանապարհների, տների և այլ
հիմնարկութեանց համար փոխանակա-
պալառուների օրական վարձով գործա-
ւոր դառնալու՝ իրանք կարող կը լինին
վեր առնել այդպիսի կապալներ, այլ ևս
ստիպուած չեն լինի մի հաստափոր կա-
պալառուի ստրուկ դառնալ: Բացի դորա-
նից նոքա կարող կը լինեն հիմնել փոք-
րիկ գործարաններ, նայելով թէ որքան
զօրութիւն կը ստանայ նոցա վարկը, և
իրանք մինչև որ աստիճան կը զարգա-
նան այդպիսի գործերում:

— Այդ արդարև կարող է բարւոքել

մշակների դրութիւնը, երբ նոքա ինքնօգնութեան միջոցներ կունենան:

— Ես առաւօտեան խնդիրը կը մատուցանեմ գլխաւոր վարչութեանն և յուսով եմ շուտով հրաման ստանալ:

Ժողովը ցրուեցաւ կատարեալ համակրութեամբ:

ԺԴ.

Այդ ժողովները, որ շարունակուած էին շաբաթը մի անգամ, մի կողմից որքան բաւականութիւն էին տալիս Բարոսեանի ցանկութիւններին՝ միւս կողմից այնքան գրգռուած էին Արտէմ Պաւլիչի տհաճութիւնը:

Այդ պատճառաւ մի օր ասաց նա իւր կնոջը.

— Ի՞նչ պիտի ըլի էդ դաւի-դառաբէ վերջը:

— Ի՞նչ դաւի-դառաբայ, զարմանալով հարցրեց Մարիամը:

— Էդպէս որ գալիս են, գնում են, ուտում են, վիթուած են...

— Ո՞վքեր.

— Չե՞ս իմանում, էդ մօթրէվուլ (Թափառական) քաղցածները, որ տղիդ նոր ընկերներ են դարձել:

Ի՞նչ կայ որ գալիս են, ջէհիլ տըղերք են, միասին հաւաքվում են, խօսում են ժամանակ են անցկացնում:

— Ախր նոքա ո՞վքեր են, ո՞ւմ տըղերքն են, որ հաւաքել է իւր գլխին:

— Ի՞նչ ես հոգում, որ տղիդ նոքա են դուր գալիս:

— Քանա իմ տունը բաղնիս է, ով որ ուզենայ մտնէ:

— Է՛հ, քեզ հետ գլուխ չունեմ, ապաց տ. Մարիամը տհաճութեամբ և հեռացաւ իւր ամուսնուց:

Արտեմ Պաւլիչը այդ վրդովմունքի մէջն էր, երբ նորա որդին տուն դարձաւ:

— Ո՞ւր էիր, Միշա, հարցրեց նա:

— Գնացել էի խնդիր մատուցանելու որ լրագիր հրատարակելու հրաման ըստանամ, ուրախութեամբ պատասխանեց երիտասարդը:

Արտեմ Պաւլիչի դէմքը խոժորուեցաւ:

— Քեզ ասում եմ, Միշա, էդպիսի դատարկ բաներիցը ձեռը վեր կալ, խելքըդ գլուխդ հաւաքիր, կաղէթներում տուտուց բաներ գրելը քեզ մինսև փող օգուտ չի տալ:

— Ես իմ օգտի համար չեմ աշխատում, հայր:

— Դորա համար քեզ զագրանից ուղարկեցի, դորա համար հազարներ քեզ վերայ մխսեցի:

— Ապա ինչ բանի համար, մեզ մոլթեամբ հարցրեց երիտասարդը:

— Ես քեզ ուսում տուի, որ ինձ պէտքը գաս, ինձ, յառաջ տարաւ Արտեմ Պաւլիչը պինդ ձայնով:

— Ես միշտ պատրաստ եմ քեզ էլ

պէտք դալ և այն գործին էլ, որին ես ծառայում եմ:

— Դ՛նւ, դ՛նւ, ինձ պէտքը գաս, աւելի պինդ ձայնով կրկնեց հայրը:— Ես քեզ ասում եմ, Միշա, վրացու համար պայման գրէ, «հինգ հարիւր մանէթ աշխատանք ունիմ»— դու ինձ խրատ ես տալիս. «էդ խղճմտանքի ընդդէմ բան է, ես չեմ կարայ գրել»...: Իէ գնան, դէ գնան, քո ուսմունքով, քո խղճմտանքով մի աբասի սև փող դատէ բեր, աչքս տեսնէ, էն ժամանակ կասեմ, թէ դու էլ մարդ ես... թէ դու էլ խելք ունես...

Երիտասարդը պահում էր իրան բոլորովին գերմանական սառնասրտութեամբ:

— Ես ձեզ հետ բոլորովին համաձայն եմ, որ մի այդպիսի հասարակութեան մէջ, որ վերջին աստիճանի բարոյական և իմացական փթուլթեան մէջն

է՛ կենդանի խղճմտանքով չէ կարելի
ապրել:

Վերջին խօսքը կատաղութեան չափ
ծակեց Արտեմ Պաւլիչի սիրտը, միայն
նա, պահելով իւր բարկութիւնը՝ ասաց
որդուն.

— Ես քեզ հօր պէս խրատ եմ տա-
լիս, որդի, էս կազէթներեմէն, վարժա-
տնէրեմէն ձեռը վեր կալ, դրանք քու
բանը չեն: Մի քանի տղերք, որ հաւա-
քել ես գլխիդ՝ քեզանից հեռացրու, նը-
րանցից խեր չը կալ, նրանք քո փողե-
րու համար են քո չորս կողմը պտիտ
գալիս, որ քեզ պլոկէն: Նատօի հետ
պսակուիր, նա մեծ չինովնիկներից ագ-
գականներ ունի, քեզ կօզնեն, դու էլ
զուլլուղ կը մտնես. փող ունիս, ուսում
ունիս, լեզուներ գիտես, զուլլուղի լե-
զուներ գիտես, զուլլուղի մէջ օրէցօր
կը բարձրանաս և շուտով գենելալ կը
դառնաս:

— Դուք ստիպում էք ինձ պսա-

կուիլ մի աղջկայ հետ, որ ուրիշին է սի-
րում:

— Ո՞ւմ է սիրում:

— Դօկտօր Բարակեանին:

— Էն քաղցած բժիշկին ես ասում,
նրան ո՞վ աղջիկ կը տայ:

— Ձեն տալ էդ ուրիշ բան է, միայն
ես գիտեմ, որ նոքա միմեանց սիրում
են:

— Դու ինչ ես միշտ էդ սէրը մէջ
տեղ քցում, դու ինձ խօսք տուր՝ ես
հէնց էս օր բանը գլուխ բերեմ:

— Ես չեմ կարող ուրիշների ան-
բախտութեան պատճառ դառնալ:

— Ուրեմն չէս ուզում:

— Ո՛չ:

— Ես երկար խօսել չեմ սիրում,
Միշտ, քեզ ասում եմ, թէ իմ խօսքը
չը կատարես՝ էլ իմ որդին չես, ես կը
զրկեմ քեզ իմ ժառանգութիւնից:

— Հայր իմ ասաց երիտասարդը
մեղմ ձայնով, դուք օրէնքով չէք կա-

րող զրկել ինձ իմ պապական ժա-
ռանգութիւնից, որովհետեւ այն ձեզ չէ
պատկանում: Այսուամենայնիւ ես թող-
նում եմ ձեզ բոլորը: Միայն կասեմ, որ
ես երբէք չեմ կարող ընդունել այնպի-
սի առաջարկութիւններ ձեր կողմից, որ
ընդդէմ են խղճի, պատուի և ազնու-
թեան:

— Ուրեմն դու էլ իմ որդին չես,
գոռաց Արտեմ Պաւլիչը դժոխային բար-
կութեամբ:

— Մշաք բարեաւ, հայր իմ, ես չեմ
կարող ձեզ հետ գործ ունենալ, երբ
դուք կամենում էք խեղդել իմ մէջ ա-
մեն մի սուրբ զգացմունք...

ԺԵ.

— Յունվար ամիսն էր:

Գիշերային խաւարը վաղուց արդէն
տիրել էր աշխարհին: Կատաղի մրրիկը

Ֆշֆշալով այս և այն կողմ էր ցրւում
մանրիկ ձիւնի հոսանքը:

Քաղաքի մի խուլ անկիւնում, փոք-
րիկ և խոնաւ սենեակի մէջ, աղօտ լու-
սով վառւում էր մի ճրագ:

Հասարակ աթոռի վրայ, զբասեղա-
նի հանդէպ, որոնք կացուցանում էին
բոլոր զարդարանքը այդ աղքատիկ բնա-
կարանի՝ նստած էր մի երիտասարդ:

Նա գրում էր:

Տետրակի ճակատին, որ դրած էր
նորա առջև՝ կարելի էր կարգաւ այս վեր-
նագիրը. «Կ ան ո ն ն եր մ շ ա կ ն եր ի
ի ն ք ն օ գ ն ու թ ե ա ն փ ո խ ա տ ու
ը ն կ եր ու թ ե ա ն»:

Փոքրիկ տունը, որի մէջ բնակվում
էր երիտասարդը՝ պատկանում էր մի
ազնուական այրի կնոջ, որի ամուսինը
թողել էր միակ ժառանգութիւնն իւր
մի հատիկ աղջկան որի չքաւոր հասոյ-
թով ապրում էր նա իւր մօր հետ:

Երիտասարդը վարձել էր այստեղ մի

փոքրիկ սենեակ, ուր մի աննշան վճարքով չափաւորապէս կերակրվում էր:

Յանկարծ դռները բացուեցան, ներս մտաւ մի մանկահասակ օրիորդ: Նա իւր կուրծքի վերայ բռնած՝ բերում էր մի քանի կտոր փայտ: Եւ յուշիկ քայլերով մօտենալով հնոցին, սկսաւ վառել նրան:

Երիտասարդը ամենևին չը նկատեց նրան: Բայց վառարանի պայծառ լոյսը, որ շուտով ծաւալուեցաւ մռայլոտ սենեակի մէջ՝ դէպի այն կողմը դարձրեց երիտասարդի ուշադրութիւնը, և նանըկատելով աղջկան, «Ախ, Մանիշակ», կոչեց և վեր թռաւ տեղից:

— Դու ինչ գիտէիր, որ այս ըոպէիս իմ մատները, ցրտից սառած, այլ ևս ընդունակ չէին գրիչ շարժելու:

— Ես գիտէի... պատասխանեց օրիորդը քնքշութեամբ:

— Ապա ինչո՞ւ շուտով վառել չը տուիր:

— Ծառայի մայրը գիւղից եկել էր,

և ծառան գնացել էր նորան տեսնելու, ես սպասեցի, սպասեցի, չը դարձաւ:

— Յետո՞յ:

— Ես ուզում էի ինքս գալ վառելու:

— Յետո՞յ:

— Վախում էի մայրս բարկանայ:

— Եւ դու տխրում էիր, որ արգելում են քեզ:

Այո՛: տխրում էի...

— Յետո՞յ:

— Յետոյ այնքան սպասեցի մինչև մայրս քնեց:

Երիտասարդը ժպտեցաւ:

— Ինչո՞ւ այդպէս բարի ես դու, Մանիշակ:

Օրիորդը շառագունուեցաւ, և կամենալով փոխել այդ խօսակցութիւնը՝ սասաց.

— Դու միշտ գրում ես, Միքայէլ:

— Այո՛, գրում եմ... մեզ մնացել է այժմ թանաք և գրիչ...

— Դու խոստացար ինձ Հայոց պատմութիւնից դասեր կարդալ:

— Ես միշտ պատրաստ եմ. եթէ դու այնքան բարի կը լինիս ինձանից դասեր ընդունելու:

— Ես շատ ուրախ կը լինեմ:

— Ուրեմն սկսենք այս գիշերից, հեգնօրէն տասցերիտասարդը:

— Արդէն գիշերային երկրորդ ժամն է:

— Ուրեմն գնա՛, հանգստացիր, իմ հրեշտակ, ես էլ շատ զբաղուած եմ:

Օրիորդը, իւր գեղեցիկ աչքերը վերջին անգամ դարձնելով դէպի երիտասարդը՝ «բարի գիշեր» ասաց և հեռացաւ:

«Ահա մի հում և անխարդախ նիւթ որից կարելի է մշակել մի օրինաւոր բեան», ասաց իւր մտքում Բաքոսեանը օրիորդի գնալուց յետոյ:

ԺԶ.

Տիկին Մարիամը, ոչ միայն քնքուշ

սրտով մայր էր, այլ նա բարի և խճճրտանքով կի՛ն էր: Իւր որդու հայրենական տնից հեռանալուց յետոյ, նորա աչքերի արտասուքը չէր չորանում:

— Մինչև երբ մեր որդին օտարի տանը պիտի ապրի, ասաց նա մի անգամ իւր ամուսնուն:

— Կը գայ, Մարիամ, մի շտապիր, նա ինքը կը գայ, պատասխանեց Արտեմ Պաւլիչը խորհրդական ձայնով: — Նրա գլխումը ջէր ինչ որ զագրանիցի իծաներ են պտուտ գալիս. երբ էնդոնքուադ կուլին՝ էն ժամանակ ինքը կուգայ. դու մի շտապիր: Թո՛ղ մի քիչ սարէ-սար, քարէքար ընկնի, ջարդուի, մաշուի՝ որ փորձուի, խելօքանայ ու նոր մարդ դառնայ:

— Եդ ինչէ՛ր ես խօսում, ողջ քաղաքը տղիդ ուսումն ու խելքն են գովում, դու ասում ես, նորից գնա՛ խելք սովորի, միթէ նա յիմար է:

— Յիմար չէ, Մարիամ, միայն մեր

աշխարհքի կարգն ու ազաթը ջէր չէ ի-
մանում: Լսիր, ես էս րոպէին կը հաս-
տատեմ նորա անփորձութիւնը:

Տիկին Մարիամը չափազանց վշտա-
ցաւ այդ խօսքերից:

— Նա, առաջ տարաւ Արտեմ Պաւ-
լիչը, նա վարժատներում դաս է տալիս:
Ինչ է՝ որ աշակերտները բան սորվին,
խելացի մարդիկ դառնան: Բայց չէ մտա-
ծում թէ որ ամենքն էլ բան գիտենան,
խելացի մարդիկ ըլին, ինքը ինչով պիտի
ապրի. ո՞վ նորանից տաս շահանոց բանը մի
մանէթով կառնէ: Հիմի որ առնում է,
էնդումէն է, որ չէ հասկանում, ինչ որ
ասում ենք հաւատում է:

Տիկին Մարիամը կամենում էր պա-
տասխանել, բայց Արտեմ Պաւլիչը նորա
խօսքը կտրեց.

— Սպասիր, մի բան էլ ասեմ. տղէդ
ուզում է մշակների համար փող հաւա-
քէ, նոցա կ'ը ե գիտ տայ, որ նոքա էլ
կարենան մեզ պէս փողրաթներ բռնել,

զաւօղներ բաց անել: Ետտ լաւ: Մշակն
էլ այդպէս դարձաւ, նա էլ: Տեսնենք էն
ժամանակ մեր աղբի քթոցը ո՞վ պիտի
տանի դուրս ածէ: Հիմի քեզնից եմ հարց-
նում, Մարիամ, էդպիսի բաներ մտածող
մարդուն կը լինի խելացի ասել:

— Ես ի՞նչ գիտեմ, պատասխանեց Մա-
րիամը, կարելի է զագրանիցում էդպէս
են սորվեցնում:

— Հաւատո՞ւ, Մարիամ, ամենը լի-
մարուլթիւններ են դրանք: Ասածու դը-
րո՞ծ կանոնները մարդը չէ կարող քան-
դել: Աստուած ձիուն ստեղծել է, որ մեր
բեռը քաշէ, շանը ստեղծել է, որ մեր
տունը պահէ, ոչխարին ստեղծել է, որ
մեզ կերակուր դառնայ, էնպէս էլ մշակ-
ներին ստեղծել է, որ մեր աղբը դուրս
ածեն, մեր տները շինեն, մեր հողը վա-
րեն, մէկ խօսքով մեզ ծառայութիւն ա-
նեն:

Տ. Մարիամը անհամբերութեամբ
լսում էր:

— Իմ Միշէն խելացի է, ես չեմ կարող նորան անխելք ասել, խօսեց նա:

— Ասում ես, թէ տղէս խելացի է, առաջ տարաւ Արտեմ Պաւլիչը: Եթէ նա խելք ունենայ՝ Նատօի նման աղջիկը, որ իր հետ մի խաղինայ է բերում իմ տունը, մի էղպիսի աղջիկ չի ուզինա: Կասէ թէ նա ուրիշին է սիրում: Սէրը սրն է. աղջիկը ում կնիկ դարձաւ՝ նորա ապրանքն է: Իէ ասն, ինձ, Մարիամ, ես որ քեզ առեցի, դու ինձ սիրում էիր:

— Ես որ քեզ առայ, չէի էլ իմանում, թէ սէրը ինչ բան է:

— Շատ լաւ, մեր հէրն ու մէրը մեզ պսակեցին, հիմի ապրում ենք: Նըրանք էլ մեզ պէս:

— Լաւ, էդունք թող մնան, հիմի ինչ ես ասում, տղէդ չը պիտի տուն բերես, հարցրեց Տ. Մարիամը անհամբերութեամբ:

— Մի շտապիր, ասեցի քեզ, նա ինքը կը գայ. թող մէ քիչ էլ տանջուի,

էն վախտ իծանները գլխիցը ռադ կուլին. նա ինքը կը գայ, կրկնեց Արտեմ Պաւլիչը սառնասրտութեամբ:

Ամուսնու սառնասրտութիւնը չափից դուրս վշտացրեց տիկնոջ փափուկ սիրտը:

— Քո մէջ սիրտ չը կայ, ես գիտեմ, ասաց նա արտասուքը սրբելով, բայց ես առանց իմ որդուն չեմ կարող ապրել, ես նորան բերել կը տամ:

— Կնկայ խելքն էլ կարճ կըլի որ ասել են՝ սուտ չէ, ասաց Արտեմ Պաւլիչը հեգնական ձևով: — Շատ լաւ, երբ կը խոստանայ Նատօին առնել էն ժամանակ թող գայ, ես նորան աչքիս լուսի պէս կը սիրեմ:

Տիկին Մարիամը չը լսեց նորան և հեռացաւ:

ԺԵ.

Ուշադրութիւն չը դարձնելով իւր

ամուսնու խոտարտութեանը՝ տիկին Մարիամը կանչել տուաւ իրանց ծխատէր քահանային, տէր Կիրակոսին, և խնդրեց զնալ որդու մօտ, համոզել հօր հետ հաշտուելու:

Ոչ ոքին այնքան յայտնի չէ լինում մի քաղաքի զանազան մարդկանց բնակարանը, որպէս տէրտէրներին: Մի քանի ժամուայ մէջ քահանան գտաւ Բաքոսեանի անյայտ սենեակը:

— Այդպէս չէ, պարոն Միքայէլ, աշխարհի կարգը, ասում էր տէր-հայրը երկար խօսելուց յետոյ:— Ծերերի և ծնողների առջև պէտք է միշտ խոնարհ լինել: Սուրբ Աւետարանը ասում է. «հնազանդ լերուք ծնողաց ձերոց»:

— Այդ շատ լաւ խօսք է, տէր-հայր, միայն սուրբ Աւետարանը չէ ասում ծրնողներին քաշել և հալածել իրանց որդւոց համոզմունքը, պատասխանեց Բաքոսեանը:

— Ելի պէտք է հնազանդ լինել, որ-

դի, նա հայր է, իսկ դու որդի ես, նա ծէր է, նա աշխարհ է տեսել, իսկ դու ջէհել ես, այնքան փորձուած չես:

— Ի՞նչ կը նշանակէ, տէր-հայր, թէ փորձուած չեմ, խելքը և գիտութիւնը մագերի սպիտակութեան և սևութեան մէջ չեն:

— Թո՛ղ լինի... առակն ասում է. «շատ ապրողը՝ շատ բան գիտէ»:

— Շատ լաւ, ասեցէք, խնդրեմ, ի՞նչ է ձեր միտքը:

— Էն է, որ դաս, միասին գնանք, հօրդ ձեռքը համբուրես և ձեզ հաշտեցնեմ:

— Ես իմ հօր հետ ոչինչ թշնամութիւն չունեմ. ես դարձեալ պատվում եմ նորան, որպէս հայր. միայն հաշտուել նորա հետ ես չեմ կարող: Որովհետեւ, նա պահանջում է, որ ես կուրօրէն հետեւեմ նորա օրինակին, որ ես դառնամ նորա կեանքի շարունակութիւնը. այսինքն, մրտածեմ այն, ինչ որ նա է մտածում,

գործեմ այն, ինչ որ նա է գործում, մի խօսքով՝ դառնամ նորա բնաւորութեան պատճէնը:

— Եղպէս չէ, պարոն Միքայէլ. հայրըդ խելօք մարդ է. այնքան էլ անհասկացող չէ, որպէս կարծում էք: Միայն նորան փոքր ինչ անհասկելի են ձեր մի քանի պարապմունքները:

— Ա՛րպիսի պարապմունքներ:

— Օրինակի համար ուսումնարաններում և էնպէսի տեղերում ձրի դասատվութիւններ անելը, մշակներին դաստիսօսութիւն կարգալը և նոցա համար մըտածելը...

Քահանայի վերջին խօսքերը խիստ վատ տպաւորութիւն ունեցան երիտասարդի սրտին, և նա ասաց.

— Ես զարմանում եմ, տէր-հայր, որ դուք, փոխանակ համակրելու մի երիտասարդի այդպիսի պարապմունքներին՝ թույլ էք տալիս ձեզ պաշտպանել պառաւների կարծիքը, չը մտածելով, որ

միւսնոյն պաշտօնը, որ կատարում է նա՛ բոլորովին ձեզ, քահանաներիդ է պատկանում: Գիտէք ինչ էր ասում Յիսուս Քրիստոս զպիւրներին և փարիսեցիներին, որոնք արգելք էին լինում ուսման և գիտութեան ժողովրդի մէջ տարածվելուն. ✱

«Վայ ձեզ օրինակացդ, զի թագուցանէք զփոկանս գլխութեանն, դուք ոչ մտանէք, և որ մտանելոցն են՝ արգելուք»: Գիտէք. տէր-հայր, որպէս էր նա հոգս տանում ժողովրդի ճնշուած, յաղթահարուած և ստրկացած դասի դրութեան բարելաւութեանը: Նա ասում էր. «Եկա՛յք առիս ամենայն վաստակեալք և բեռնաւորք, և ես հանգուցից զձեզ»:

Քահանան բոլորովին ստուեցաւ, նրկատելով, որ իրաւաբան զօկտօրը Աւետարանն էլ գիտէ:

— Մեր կրօնքը, ւուաջ տարաւ Բարսեանը, չէ քարոզում կատաներ, որոնցից մինը ծնուած լինէր հայր Բրահմայի գլխից, իսկ միւսը՝ նորա ոտքե-

րից: Մեր կրօնքի մէջ տիրում է կատարեալ ազատութիւն: Եւ ձեր ամեն օր կարգացած Աւետարանը նոյն է քարոզում թէ Քրիստոսի եկեղեցւոյ մէջ ծառայ, ազատ, խուժ, դուժ, սկիւթացի բոլորը մի են: Ուրեմն, տէր-Տայր, աշխատենք միասին սրբել մշակ դասի արտասուքը, թողնենք կորուսեալներին իրանց ոսկու կուռքերին երկրպագել, հեռանանք այդ մեզ համար անպիտանացած դասից, որոնց այնքան առում էր Յիսուս Քրիստոս...:

Քահանան, նկատելով, որ հօր անունով չը կարողացաւ համոզել Բաքոսեանին, փոխեց իւր խօսքը:

— Մայրդ միշտ լաց է լինում, ասում է «թող դու, Նասիրովեց Նաաօին նշենք». ամեն օր աղջկայ մայրը էլչի է ուղարկում, ասում է, Նաաօին ես բացի Սիխայէլից ուրիշ աղի չը պիտի տամ: Ի՛նչ, սրգի, մի այգպիսի աղջիկ, որ մեր քաղքում չը կայ, քեզ համար ուղում

են, էլ ինչ ես սպասում, զնն, պահուիր էլի:

— Ամուսնութիւնը, Տէր-Տայր, մի այնպիսի սուրբ բան է, որի մէջ ծնողաց միջամտութիւնը տեղիք չունի: Ծնողների բռնաբարութիւնը այգպիսի հանգամանքներում միայն աւելացնում է անբախտ ամուսինների թիւը:

Քահանան նկատելով Բաքոսեանի երկաթի հաստատամտութիւնը՝ տխուր յուսահատութեամբ թողեց հեռացաւ, փոստելով իւր մի քանի հարիւր մանէթի կորուստը որ կարող է նա ստանալ երիտասարդի պսակուելուց:

ԺԸ.

Քաղաքի գլխաւոր վարչութիւնը հրաման չը տուաւ Բաքոսեանին իւր ցանկացած լրագիրը հրատարակելու: Նորա մշակներին կարգացած դաստիգօտութիւն.

ները արգելուեցան: Նորա ժողովների վերայ սկսան կասկածանքով նայել:

Մի կողմից այդ անյաջողութիւնները, միւս կողմից կեանքի և ապրուստի անյարմարութիւնները մինչ այն աստիճան տանջում էին նորան՝ որ նորամարմնական ոյժը սկսել էր սպառուել:

Նա նոյն ժամանակ ապրում էր մի փոքրիկ գումարով, որ ստանում էր մի տպարանի կառավարելուց, և այն արծաթով, որ վճարում էին նորան արտասահմանում զանազան եւրոպական լրագիրներին ուղարկած յօդուածների համար:

Բայց երիտասարդի կարծիքի մէջ վաղուց արդէն բոյն դրած չարագուշակ հազը, նորա կեանքի վերջին հանգամանքներից աւելի սաստկանալով՝ ձգեց նորան ծանր հիւանդութեան մէջ:

Ծնողները ոչինչ չէին լսել նորա հիւանդութեան մասին: Գեղեցիկ Մանիշակը միայն, որի անմեղ և բնքոյշ սրտի մէջ այնպէս սրբութեամբ թագնուած էր

երիտասարդի սերը՝ միայնակ հոգս էր տանում նորա առողջութեանը:

Տխուր դէմքով նստած էր օրիորդը հիւանդի անկողնի մօտ և արտասուքի մարգարիտները գլորվում էին նորա նոյն րոպէին գունատուած դէմքի վերայ:

Հիւանդը վառվում էր տաքութեան մէջ: Նորա տենդային ցնորքներում, կրցկտուր խօսքերով, զարձեալ արտասանվում էին այն բառերը, որոնց նշանակութիւնը միշտ կապակից էին եղած նորա հոգևոյ և մտածութեան հետ...

Յայանուեցաւ բժիշկը:

Մեր ընթերցողին պէտք է յիշել, որ այդ պարոնը Բաքոսեանի բարեկամ դօկտոր Բարակեանն էր, մի աղքատ բժիշկ, որ սիրում էր օրիորդ Նատօին:

— Պարոն դօկտոր, քնչպէս էք գըտնում այսօր հիւանդին, հարցրեց նորանից օրիորդը, երբ նա կամենում էր դուրս գնալ:

— Ոչինչ, մի փոքր բորբոքումն ու-

նի սուղեղի մէջ, դուք գործ դրեցէք այն հնարները, որ ձեզ պատուիրեցի, յոյս ունիմ շուտով կանցնի, պատասխանեց բըժիշկը:

— Եւ դուք կարծում էք, որ հիւանդութիւնը վտանգաւոր չէ:

— Հաւատացնում եմ ձեզ, ոչինչ չը կայ, շուտով կառողջանայ:

Բժիշկը հեռացաւ:

«Ա՛խ, Աստուած»... հառաչեց օրիորդը և իւր գլուխը թագցրեց հիւանդի բոցավառուած գրկի մէջ, կարծես, իւր շնչով կամենում էր նորան կեանք տալ:

ԺԹ.

Երիտասարդի առողջութիւնը փոքր ինչ լաւացել էր, յանկարծ ստացաւ նա մի նամակ: Այդ նամակը ձգեց նորան սոսնձագոտութեան մէջ:

Գիտէս, Մանիշակ, սրբան շտա-

պում եմ ես շուտ առողջանալ. առացնամի անգամ օրիորդին, որ նստած էր նորա մօտ:

— Ես էլ շատ եմ շտապում... պատասխանեց աղջիկը հրեշտակային պարզամտութեամբ:

— Միայն այդ ցանկութիւնները մեր երկուսիս մէջ բախտովին զանազան պատակներ ունին:

— Թող ունենան... միայն ես շատ ուրախ եմ, որ դու այսօր բաւական լաւ ես:

— Անմեղ գառնուկ, կոչեց հիւանդը համազգացութեամբ նայելով օրիորդի երեսին:

Յայտնուեցան հիւանդի ընկերները. օրիորդը հեռացաւ:

Բաքոսեանի առողջութիւնը բաւական ուրախութիւն պատճառեց նոցա:

— Մեր կեանքը, ասաց երիտասարդը, մի չնչին բան է. նա այսօր կայ, վաղը ոչնչացաւ: Բայց մենք, պարոններ,

աշխատենք կեանք տալ այն գործին, որին ամենքս նուիրուած ենք:

— Մեր նպատակը և ցանկութիւնը իսկ այդ է, պատասխանեցին նոքա:

Լոկ նպատակը կամ ցանկութիւնը, բարեկամներ, ոչինչ նշանակութիւն չունի, երբ նա չէ իրագործվում, երբ նա մարմին չէ դառնում: Լոկ ցանկութիւնը ցնորք է:

— Ի՞նչ պէտք է արած, երբ մեր հասարակական կեանքի մէջ հիմք չը կայ, հարցրեց մինը:

— Այնտեղ որ հասարակական կեանքը այնպիսի փթած դրութեան մէջ է գտնվում՝ գործող մարդուն պէտք է հիմնուել իւր սեպհական ուժերի վերայ, ոչ ոքից նպատակ և օժանդակութիւն չը սպասելով: Պառաւներին մենք չենք կարող ուղղել, նոցա կուղղէ միայն գերեզմանը: Մեր կրթեալ երիտասարդութիւնը համարեան փչացած է, նոքա մեզ համար կորած են: Իսկ միակ ուժը, որ մը-

նացել է կենդանի, [Ժարմ և անկեղծ՝ գտնվում է ամբօխի մէջ—մեր յոյսը պէտք է նորա վերայ դնենք և աշխատենք մշակել նորան:

Չը նայելով Բաքոսեանի մարմնական տկարութեանը՝ նա այն օր խօսում էր առանց լռելու: Կարծես վերջին ժամն էր, որ այլ ևս չը պիտի խօսէր իւր ընկերների հետ:

Ի.

Անցան մի քանի օրեր:

Մութ խաւարային գիշեր էր:

Բաղաքի մի անկիւնում, մարդկանց բնակարանից հեռու, զգացմունքների տրխուր և ուրախ վրդովմունքներով, կանգնած էին երկու հօգի:

— Ես բաժանվում եմ քեզանից, Մանիշակ, մի հեռու և վտանգաւոր ճանապարհ բացուած է իմ առջև, ասաց Բաքոսեանը օրիորդի ձեռքը բռնելով: Գու-

ցէ այլ ևս չը յաջողուի մեզ տեսնել մի-
մեանց, բայց հաւատս, Մանիշակ, որ-
քան կեանք կայ և կը լինի իմ մէջ՝ եր-
բէք չեմ մոռանայ քեզ:

Օրիորդը մինչև այն ժամանակ չէր
համարձակուել բաց անել երիտասարդին
իւր սիրտը, բայց բաժանման վերջին րո-
պէն խլեց նորա կուսական շրթունքից
համեստութեան կնիքը և նա ասաց.

— Բայց դու չես խղճում, Միքայէլ,
որ թողնում ես ինձ միայնակ...

— Ես ցաւում եմ, որ բաժանվում
եմ քեզանից, միայն չեմ կարող չը գը-
նալ...

— Սաս, գոնեա, որ սիրում ես ինձ:
Վերջին խօսքերը մինչ այն աստի-
ճան վառեցին օրիորդի ամօթխածութիւ-
նը, որ նա գիշերային մթութեան մէջ,
կարծես չէր կամենում, որ երիտասարդը
նշմարէ նորա նոյն րոպէին շառագունած
գէմքը, և իւր գլուխը թագցրեց նորա
սաստիկ զարկուող կրծքի վերայ:

— Լսիր, Մանիշակ, ինձ դժուար է
ասել այդ խօսքը որովհետև ես ունիմ մի
այլ սիրուհի, որի սէրը այժմ կոչում է
ինձ զիմել դէպի նա... ասաց Բաքոսեա-
նը րոպէական շփոթութիւնից յետոյ:

Օրիորդը սարսափեցաւ:

— Ուրեմն ես կորած եմ... հառա-
չեց նա և թուլացաւ երիտասարդի գրկի
մէջ:

Այդ տխուր-հոգեկան վրդովմունքը
տիրեց մի քանի րոպէ:

— Հայրենիքիս մէջ պատերազմ կայ,
Մանիշակ, ձայն տուաւ երիտասարդը խո-
րին ոգևորութեամբ: — Իմ ազգը — իմ սի-
րուհին կոչում է ինձ... պէտք է գը-
նամ...

Օրիորդը սթափուեցաւ:

— Գնա, Միքայէլ, Հայոց Աստուա-
ծը թող քեզ օգնական լինի, ասաց նա
քաջազնական արիութեամբ: — Գնա, պա-
տերազմիր, ես կաղօթեմ քեզ համար:

Քաղերով օրէսրդի շրթունքից վեր-

ջին հրաժարական համբույրը՝ Բաքոսեանը նստեց կառքը, որ նորան սպասուում էր փոքր ինչ հեռու և անհետացաւ գիշերային խաւարի մէջ:

18. . . թիւն էր:

Զէյթունի լեռները խնկվում էին վառօդի ծխով: Տաճիկները պաշարել էին նորան: Մի երիտասարդ առաջնորդում էր քաջերի խումբին: Կռուի բորբոքուած խռովութեան մէջ նա բարձրացաւ ամբարտակի վերայ: Մի առնաւուտ զինուոր, դարան մտած ժայռի չետքում՝ պարզեց իւր հրացանը: Գնդակը սուլեց, երիտասարդը, կրծքից վիրաւորուելով, գլորուեցաւ գետին:

Հորիզոնի խաւար մթնոլորտից ցուլաց մի աստղ...

Դա Միքայէլ Բաքոսեանն էր:

Թ. քաղաքի բլուրների մէջ մեղմ— բարեպաշտական հնչումներով լսելի էր լինում վանքերի վաղորդեան զանգահարութեան ձայնը: Մի մանկահասակ կուսան, բոլորովին սև հագնուած, շտապում էր դէպի Աստուծոյ տաճարը: Նա առանձնացաւ մի խուլ անկիւնում, և չոգած մերկ յատակի վրայ՝ գունատուած— աղօթասէր շրթունքներով կուսական սրտի ջերմ մաղթանքները վերախնկում էր դէպի Յաւիտենական աթոռը: Դա օրիորդ Մանիշակն էր:

Բայց ինչ եղաւ Արտեմ Պաւլիչի և տիկին Մարիամի վերջը:

Որդու յանկարծակի անհետանալը, առանց իւր մասին որևիցէ տեղեկութիւն թողնելու՝ վրդովեց խստաբարոյ ծերունու քարացած սիրտը:— Նա հանգստութիւն չունէր: Նա տանջում էր փոշմանութիւնից, տանջում էր իւր մէջ խիստ ուշ զարթած խղճմտանքից...

Որդու մահուան լուրը հասցրեց նո-

րան վերջին հարուածը: Ծերունին խե-
ղագարուեցաւ:


Իսկ տիկին Մարիամը, սրտի կսկը-
ծից մաշուած և վշտահարուած առաքի-
նուհին, խնամք էր տանում հիւանդ ա-
մուսնուն, անդադար լիշեւով իւր սիրե-
լի Միշային...

— Ա՛յ էր մեղաւոր:

1) ԲԱՖՖԻ Պարոյր Հայկազն. 20 Կ.

2) ,, Ռ՛վ էր մեղաւոր. 20 Կ.

Վաճառվում է «Կովկասեան» գրաւաճարանոցում—Զաքարեայ Գրիգորեանի և Հեղինակի այրիի մօտ:



ԳԻՆՆ Է 20 Կ.

Շուկաով լոյս կը տեսնի «ԽՍ.ՄՍԱ.ՅԻ
ՄԵԼԻՔՈՒԹԻՒՆՆԵՐ»:



